

ՄՇԱԿ

Տարեկան դինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի:
Առանձին համարները 7 կոպեկով:
Թիֆլիսում գրվում են միմյանս խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բայց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լիզուով:
Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Եւրոպայի պարտաւորութիւնը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պաշտօնական տեղեկութիւններ խօշ-
րայի մասին. Սարսափ տարափոր վրա. Ձը վը-
հատվելը. Խորաններ խօշրայի մասին. Նամակ
Բաթումից. Նամակ Խմբագրին. Նամակ Խմբա-
գրին. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.
Կէսքեր Չինաստանում. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ
ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱՎԻՐՆԵՐ.—ԲՈՐՍԱ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒ-
ԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Խօշրան Եւրոպայ:

ԵՐԵՎԱՆԻ ՊԱՐՏԱՆՈՐԴՈՒԹԻՒՆԸ

Ասիական այն պետութիւնները, որոնք
քաղաքակրթութեան ստոր աստիճանի վրա
են կանգնած, որոնց ազգաբնակչութիւնը
գաւառում է մահմեդականութիւնը, որոնք
գարեի ընթացքում անշարժ վիճակի մէջ
են գտնվում—կարօտ են միշտ աւելի քա-
ղաքակրթ իրերի ինտամկալութեան:
Թիւրքիա և Պարսկաստան, այդ երկու ան-
շարժ պետութիւնները, հետզհետէ ընկնում
են այդ տեսակ ինտամկալութեան տակ:
Պետական ամենանշանաւոր ֆակտորներ ար-
դէն հետզհետէ անցել են եւրոպացիների
ձեռքը. Պարսկաստանի և Թիւրքիայի դո-
քերը արդէն առաջնորդում են եւրոպա-
ցիներից, նրանց պատահականորէն հաս-
տատութիւնները գտնվում են եւրոպացիներ-
ի ձեռքում: Ֆինանսները եւրոպացի կա-
պիտալիստներն են ձեռք առել, բնական
հարստութիւնները թէ Պարսկաստանում
և թէ Թիւրքիայում եւրոպացիք են ար-
դենաշահում, երկաթուղիների գծերը
Թիւրքիայում եւրոպացիք են անցկացնում
ու կառավարում, վերջապէս հաստատվել է
Թիւրքիայում եւրոպական միջազգային բժշ-
կական յանձնաժողովը...

Եւ իրաւ, մահմեդական երկիրների դա-
րեւոր անշարժութեան պատճառով, Ղու-
բանը դաւանող ազգերի մոլեռանդութեան
պատճառով Պարսկաստանն ու Թիւրքիան,
իրանց ժողովրդի մէջ տիրող անեղանկայելի
անմարդկութեան շնորհով դարձել են ամեն
տեսակ վարակիչ հիւանդութիւնների բնոր-
ժողովրդի մէջ տիրող անասելի անփոյթու-
թեան պատճառով նրանք դարձել են ամեն
տեսակ մարդկային աղետների հայրենիք...
Ինչ ասես, որ այդ երկու երկիրները չեն
շնորհում մեզ, իրանց հարեան երկիրներին,

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԽՈՒՆԻՍԻ ԶՈՒՆՈՒՄ

Անցեալ անգամ ես գրեցի, որ բժիշկների առ-
ջող ռազմարթիւնը կհետաքննուի մի քանի
վրա, որ խօշրան եկտրոնից չանցնէ ընկի քա-
ղաքացիների վրա, այլ չէզոքանայ, առանձնանայ:
Դժբաղդաբար, այդ անկարելի եղաւ անել, վերջին
օրերում հիւանդացան մի քանի հոգի ընկի շուշ-
ցիներ, որոնք քաղաքից դուրս չէին գնացած:
Դրանցից երեք հոգի մեռան հիւանդութիւնը սկըս-
վելուց 8—10 ժամի ընթացքում: Դրանք հեղձու-
թէն, դժուարատար խօշրայի դէպքեր են. առ-
այժմ դեռ չատ չեն այդպիսի դէպքերին դո՛ւ գնա-
ցողները. հիւանդների թիւը տնեւում չատ քիչ է,
մեռանդները միայն այդ երեքն են, որոնցից մի
կին և երկու տղամարդ:

Այսպէս ահա իրերի դրութիւնը առաջացրեց
բողոքովն բնական հետաւանդներ: Ղարաբաղը ա-
մենից շատ է մարդ ուղարկում Բագու և ամենից
շուտ էլ ընդունեց խօշրայի թոյնը այն մարդկանց
ձեռքից, որոնց իւրաքանչիւր տարի հազարներով
ուղարկում էր Բագու Վարդ դառնալու: Մի
շաբաթվայ ընթացքում (յուլիսի 13—20) խօշ-
րան հաստատվեց Ղարաբաղում և այժմ նրա ճան-
կերին մատնված են ոչ միայն Վարդ դառնալու

այսպիսով վտանգի մէջ գնելով և ամբողջ
Եւրոպան ենթարկվելու այդ սարսափելի
աղետներին: Մորեկը այդտեղից է գալիս,
խօշրան այդտեղից է գալիս, ժանտախտը
այդտեղից է անցնում...

Եւ մի թէ Եւրոպան չէ մտածում, որ
մահմեդական երկիրների մէջ տիրող այդ
անշարժութիւնը, մոլեռանդութիւնն ու
անփոյթութիւնը վերջ ի վերջոյ ամբողջ
քաղաքակրթ աշխարհին էլ մեծ վտանգ է
սպառնում: Եթէ մարդասէր Եւրոպան մին-
չէ այժմ չէ հասկացել, որ ընդհանուր
մարդկութեան բարօրութեան համար ան-
հրաժեշտ է մահմեդական երկիրներում
աւելի ոյժ տալ քրիստոնէայ տարրերին,
համամարդկային քաղաքակրթութեանը յար-
վելու աւելի ընդունակ տարրերին, նրանց
աւելի գերակշռող դեր յատկացնելով ան-
շարժ և հակակրթական Պարսկաստանում
և Թիւրքիայում—գոնէ մտածել, ընդհան-
րութեան օգտի համար, ինտամկալութիւն
նշանակել այդ երկու երկիրների վրա և
այն ֆակտորի վերաբերմամբ, ժողովրդական
առողջութեան վերաբերմամբ, որը եթէ
անբաւարար դրութեան մէջ կը գտնվի ան-
տարակոյս մեծ վտանգ կը սպառնայ և
ամբողջ աշխարհին:

Ինչ և իցէ Թիւրքիայում քանի մի տարի
է արդէն որ գոյութիւն ունի եւրոպական
միջազգային բժշկական յանձնաժողով: Ո՞րքան
աշողութեամբ է գործում այդ յանձնաժողով-
ը—այդ մեզ յայտնի չէ. բայց գոնէ զիտե՛ք
թէ նա գոյութիւն ունի: Իսկ Պարսկաստա-
նի վերաբերմամբ այդքանն էլ չեն արել,
այն ինչ մեզ յայտնի է որ ամենապատանդա-
ւոր վարակիչ հիւանդութիւնները միշտ
Պարսկաստանից են գալիս մեր կողմերը, և
մեր երկրից սպառնում են անցնել Ռու-
սաստան և ապա արեւմտեան Եւրոպա:

Բաւական է արդէն Եւրոպան իբր թէ
յանուն «միջազգային անբուժարեղի իրա-
ւունք», յանուն «քաղաքական հաւասարա-
կշիւութեան» համբերեց այնպիսի պետու-
թիւններ ինչպէս անշարժութիւնը, մոլեռանդու-
թիւնը, անփոյթութիւնը, կեղտը, անմար-
դկութիւնը, հակառողջական վիճակը, աղի-
տութիւնը, խաւարը, հակակրթական և
հակաառաջադիմական ձգտումները, դէպի
լուսաւորութիւնը նրանց ունեցած անհաշտ
թշնամական ոգին,—որոնք դարերի ընթաց-

քում գործով ապացուցին իրանց կատարեալ
անբուժանելիութիւնը պետական ինքնակար-
կեանքով ապրելու և որոնք իրանց դարեւոր
անշարժութեան մէջ հանդիսանում են
միշտ որպէս կենդանի բողոքներ, մար-
մնացած սպառնալիքներ՝ ընդդէմ համա-
մարդկային քաղաքակրթութեան ու լուսա-
ւորութեան:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԽՈՒՆԻՍԻ ՄԱ-
ՍԻՆ

Բագուի նահանգապետի հաղորդած տեղեկու-
թիւնների համեմատ, յունիսի 24-ին խօշրային
հիւանդանոցները մտան 37 հոգի, դրանցից եկտը-
ները 27 են, տեղացիներ 10: Հիւանդների ընդհա-
նուր թիւը մեռան 18, դրանցից եկտըներ 14,
տեղացիներ 4. առողջացան 6, մեռան են հիւան-
դանոցում 179, դրանցից եկտըներ 143, տեղա-
ցիներ 36, հիւանդանոցից դուրս մեռան 94, տե-
ղացիներ 76, եկտըներ 18: Սպիտակ քաղաքում
կրկին հիւանդացան 7 հոգի, եկտըներ 6, տեղա-
ցիներ 1, առողջացան 3. մեռան են 10 հիւանդ-
ներ: Բալխանա-Սարուհեան ամառանոցում կըր-
կին հիւանդացան 12, հիւանդների ընդհանուր
թիւը մեռան 7, մեռան են 13 հիւանդներ: Սալխա-
նի պահեստի գնդի հիւանդանոցը կրկին 8 հիւանդ-
ներ են մտել, հիւանդներ կան 23: Բայցի դրանից
Ղուբայի գաւառում հիւանդացան 4, մեռան 1,
ձէվաթի գաւառում հիւանդացան 10, մեռան
9, առողջացան 1:

Ելիսաւետպոլի նահանգապետը հեռագրում է,
որ յունիսի 24-ին Եւրոպայի հիւանդանոցն
եկաւ 1 հիւանդ, հիւանդանոցից դուրս 3 հիւանդ-
ներ կան, դրանցից եկտըներ ընդամենը 4:
Եւրոպայում ինչպէս մեռան 4. Եւրոպայում
հիւանդացան խիստ թիւով, Կիւսումու, Ելիս-
Եւրոպայից, Օվարի և Գալաթիքից գիւղերի 6
բնակիչներ. ձէվանդիւրեան գաւառի Ելիսում
№ 22 գնացքից թողված է խօշրայով հիւանդ մի
կին, որը գիւղեր վախճանվեց: Այստեղ և եթ
քաղաքապետներում հիւանդացան Բագուից եկած
երկու հոգի: Այսպէս գիւղում հիւանդացաւ 1

հոգի, եղած հիւանդներից մեռաւ 1: Կուրտամա-
նիան, Կիլի, Բալխանապուր և Տարախամանա գիւ-
ղերում հիւանդացան մէկ մէկ հոգի, բոլորն էլ
մեռան: Նահանգում խօշրայով հիւանդներ կան՝
Եւրոպայի քաղաքում 10, գաւառում 11, ձէվանդի-
րեան գաւառում 11, Ղազախի գաւառում 1, Ելի-
սաւետպոլ քաղաքում 3, ընդամենը 45 հոգի:

Կաղստանի նահանգապետի տուած տեղեկու-
թեան համեմատ, յունիսի 24-ին և 25-ին Պետ-
րովսկում երկաթուղական բանտներից խօշրա-
յին նշաններով հիւանդացան 3, մեռաւ 1: Կար-
գինեան չըջանում հիւանդացան հինգ, մեռան
երեք հոգի:

Թիֆլիսում յունիսի 26-ին առաւօտեան քաղա-
քային Միքայելեան հիւանդանոցում կային խօշ-
րայով 10 հիւանդներ. ցերեկով եկան 2, մեռաւ
1 հոգի. յունիսի 26-ին գիւղերը հիւանդանոցն
եկող և հիւանդանոցից դուրս եկողներ չը կային:
յունիսի 27-ին առաւօտեան հիւանդանոցում 11
հոգի կային: Հիւանդանոցից դուրս յունիսի 25-ին
խօշրայով հիւանդացան 2. յունիսի 26-ին հի-
ւանդացաւ կրկին 1 հոգի, վերջինը մեռաւ մի և
նոյն օրը:

Բագուի նահանգապետը հեռագրում է, որ յու-
նիսի 25-ին կրկին խօշրային հիւանդանոցները
մտան 37, եկտըներ 28, տեղացիներ 9, Հիւանդ-
ների ընդհանուր թիւը մեռան 25, տեղացիներ 6,
եկտըներ 19. առողջացան 11, մեռան են հիւան-
դանոցում 180. Հիւանդանոցներից դուրս մեռան
36, տեղացիներ 26, եկտըներ 10. Սպիտակ քա-
ղաքում կրկին հիւանդացաւ 1 եկտը, մեռան 4
եկտըներ. առողջացան 4 եկտըներ. մեռան են 4
հիւանդներ. Բալխանում հիւանդացան 13, եկ-
տըներ 11, տեղացիներ 2. մեռան 4. առողջա-
ցան 2 եկտըներ, մեռան են 20 հիւանդներ:
Սալխանի պահեստի գոյքի հիւանդանոցը կըր-
կին 2 հիւանդներ մտան. հիւանդների ընդհանուր
թիւը մեռան 2, մեռան են 23 հիւանդներ. Բա-
գուի բանտում մեռաւ կրկին 1 բանտարկեալ:

Ելիսաւետպոլի նահանգապետը յունիսի 26-ին
հաղորդում է, որ քաղաքային հիւանդանոցը մտան
2 հոգի, որոնք և մեռան: Հիւանդանոցից դուրս
հիւանդացան 10, մեռան 3 հոգի: Եւրոպայում

թիւնը այդ տարախով խօշրայի դէմ է գնում:
Կարկուտից յետոյ սկսվեց յորդ անձրև:

Երէկ, յունիսի 20-ին, բժշկապետ Տէր-Գրիգոր-
եանց թեմական դպրանոցի դասի՛նում կարողաց-
աւ հանրամատչելի դասախօսութիւն խօշրայի
մասին: Թէն դասախօսութիւնը նշանակված էր
մասնաւորապէս սանիտարական խմբում գոր-
ծողների համար, բայց և այնպէս բաւական կող-
մանի մարդիկ էին հաւաքվել դասախօսութիւնը
լսելու: Բժշկապետի դասախօսութիւնը շատ լաւ
անցաւ. մաքուր հայերէն բարբառով նա բա-
ցատրում էր ամեն ինչ, պարզ կերպով հաս-
կացնում էր հիւանդութեան պատմութիւնը: Դա-
սախօսութիւնը միանգամայն բարեբար ազդեցու-
թիւն արաւ լսողների վրա: Նա գիտակցութեան
չողեր մտցրեց հասարակ ամբիւսի մէջ և սրանից
առաւել ինչ բարեբար ազդեցութիւն: Աղետի ժա-
մանակ տեսնել ամբիւսի դէմքի վրա ոչ թէ ան-
միտ, կոպտ մի ըմբոթիւն, այլ իմացականու-
թեան, թշնամի ճանաչելու վերին աստիճանի սի-
րուն արտայայտութիւն—ահա այն իրական օ-
գուտը, որ կարող է մատուցանել ինտելլեկտիւան
խաւար ամբիւսին: Հասարակ արհեստավարները
հետաքրքրվում էին, հարցեր էին առաջարկում
բժշկապետին: Կային և երկու քահանաներ: Եթէ
ժողովուրդը ունենար այժմ լաւ պատրաստված,
զարգացած քահանաներ, որքան օգուտներ կու՜նե-
նար. ամեն տեղ կը մանէին նրանք, կը տարածէին
մտքում իսկոյն ծովից այն սփոփանքը, որ բնու-

մտցնէին ժողովրդի մէջ: Բայց, դժբախտաբար,
չը կան այդպիսի քահանաներ. ժողովուրդը սո-
վորած է քահանայի միակ արժանաւորութիւնը
համարել լաւ շարական ասելը: Լսում ենք որ ժո-
ղովրդի խնդրեցով արքերի աշխը պիտի բերեն, թա-
փօր պիտի անեն խօշրան հալածելու համար: Եւստ
լաւ կանէր բժշկապետ Տէր-Գրիգորեան, եթէ դա-
սախօսել ժողովրդի աւելի մեծ բազմութեան առաջ.
երէկվայ նրա ունկնդիրները համեմատաբար քիչ
էին: Բժշկապետը չը բաւականացաւ միայն հայե-
րէն հասկանալով խօշրայի ինչ լինելը: Այսօր,
21-ին, նա հաւաքեց թուրք երիտասարդութիւնը,
որը բաղկացած է ուսանողներից և արքունական
գիւղական ուսուցիչներից, նրանց էլ հասկացրեց
սանիտարական խմբերի պարտականութիւնները:
Թուրք երիտասարդները այդպիսի խմբի կազմ-
ւում պատրաստականութիւնն են յայտնել և, ինչ-
պէս ասում են, արդէն սկսել են գործը: Այդ մի
վերին աստիճանի ուրախալի երևոյթ է, եթէ
փորձեցե՛ք կշռելու թէ որքան բարձր կունենանք,
կը մահմեդական տարրը քաղաքակրթութեան,
գիտութեան պահանջները գիտակցօրէն գործա-
դրելու կարողութեան մէջ մտնէ:

Բագուից եկողները, որոնք միջ համար խօշրա-
քերին, միայն Եւրոպայի քաղաքը չեն մտնում, այլ և
ցրվում են գիւղերում: Ուրեմն անկարելի է, որ
խօշրան չը տարածվի և գիւղերում: Վերջին
պաշտօնական տեղեկութիւններին նայած՝ մի քա-
նի գիւղերում կան հիւանդներ, որոնք Բագուից

ուի Շաշիքէնդ գիւղում հիւանդացաւ 1, Շարու-
քէշիւում—2, Խանաբադում—3, Խոյնբային բա-
ժանմունքում—1, ընդամենը հիւանդացան 7. բացի
զրանից Խոյնբային բաժանմունքում դառնում են
3. Ջէվանշիրեան գաւառում, Ալպաուտ գիւղում,
հիւանդացան 4, Քիւմանշլի գիւղում—2, երկուսն
ևս մեռան. Շիրվանլիում թողել է բժիշկը Բա-
գուլից եկած մէկին. Ղազարի գաւառում, Աղս-
տաֆա գիւղում հիւանդացաւ Խոյնբայի նշաննե-
րով Պէնդայի նահանգի գիւղացի Կասաֆրով և
տարիկց Խոյնբային հիւանդանոցը. Ալիսաւետապոլ
կայարանում բռնկած են երկու հոգի Խոյնբային
կասկածելի նշաններով և տեղափոխված են երկա-
թուղիական հիւանդանոցում: Քաղաքում նոր հի-
ւանդացողները չը կան: Նահանգում Խոյնբայով հի-
ւանդներ կան՝ Շուշի քաղաքում 26, գաւառում
10, Ջէվանշիրեան գաւառում—16, Ալիսաւետապոլ
քաղաքում—3, Ալիսաւետապոլ կայարանում—2,
Ղազարի գաւառում—1, ընդամենը 58 հոգի:

Քուլթայի գիւղերական նահանգապետը յունի-
սի 26-ից հաղորդում է, որ Բագուլից Բալթում
հասած ռուս բանուորների խմբից մի և նոյն
թիւն մեռաւ 1 հոգի Խոյնբայի նշաններով:

Կաղստանի չըջանի գիւղերական նահանգապե-
տը յունիսի 26-ից հեռագրում է, որ եկած նաւով
Պետրովսկի նաւահանգիստն է բերված կրկին Խո-
յնբայով մի հիւանդ, որն ընդունվեց հիւանդանո-
ցում. հիւանդանոցից դուրս մեռան երկաթուղիա-
կան երկու բանուորներ: Պետրովսկի հիւանդանո-
ցում կան 9 հիւանդներ. Ալիսաւետապոլ, Կարգինեան,
և Սամուրեան չըջաններում կան 10 հիւանդներ:

Բագուի նահանգապետի հաղորդած տեղեկու-
թիւնների համեմատ, յունիսի 26-ին Խոյնբային
հիւանդանոցները կրկին մեռան 29, դրանցից եկ-
ւորներ 17, տեղացիներ 12. հիւանդների ընդհա-
նուր թիւից մեռան 32, եկւորներ 29, տեղացի-
ներ 3, առողջացան 16. հիւանդանոցում մեռաւ
են 161, դրանցից եկւորներ 117, տեղացիներ
44. հիւանդանոցներից դուրս մեռան 41, տեղա-
ցիներ 32, եկւորներ 9. Սպիտակ քաղաքում կը-
կին հիւանդացաւ 1 եկւոր. մեռաւ են 5 հիւանդ-
ներ. Բալթայան-Սաբունեան ամառանոցում կը-
կին հիւանդացաւ 5. հիւանդների ընդհանուր
թիւից մեռան 6, առողջացան 5, մեռաւ են 14
հիւանդներ: Սալիանի պահեստի զօրքի հիւանդա-
նոցը կրկին մեռան 3 հիւանդներ, մեռաւ 1,
մեռաւ են 25 հիւանդներ. Ղազարի գաւառում
մեռան 9, Վեօկայի գաւառում մեռան 3 հոգի:

Ալիսաւետապոլի նահանգապետը հաղորդում է,
որ յունիսի 26-ին Շուշի քաղաքում հիւանդացան
18 հոգի, որոնց թիւում և պոլսական զօրքի 1
կազմակ. մեռան 5. գաւառում կային 10 հիւանդ-
ներ, հիւանդացան 8, մեռան 8. Ջանգեղուրի
գաւառում ոստիկանութիւնը նկատել է հիւան-
դութիւնների 7 դէպքեր, որոնք մահով են վերջա-

եկածներ են: Ի նկատի ունենալով թէ մեր գիւ-
ղացի ժողովուրդը ինչ նախաջնջեղեղեան հասկա-
ցողութիւններ ունի հիւանդութիւնների մասին,
հեշտ է եղբակացնել թէ ինչ կը լինի Խոյնբային
նրա մէջ... Այդ կողմից մանաւանդ. վատ է Սի-
նեաց անաղին երկրի դրութիւնը: Իւրաքանչիւր
տարի այդ երկրից 10,000-ից աւել մարդիկ են
գնում Բագու և բոլորն էլ անաբաւ բանուորներ,
մշակներ. այժմ այդ թիւըստ բաղմունքիւնը տուն
դառնալ է չտալով, տանելով իր դատարկ
զրպաններով տոկալի հիւանդութիւնը միայն...
Երկաթուղու Եւլան կայարանից դրանց մեծ մասը
ոտով է գնում մինչև գիւղերը. և ուժաթափ,
տանջված՝ դիակներ է փուռ մանապարհի վրա:
Նրանք խուսափում են մեծ ճանապարհից, որպէս
զի բժշկական քննութեան չենթարկվին... Սի-
նեաց երկրից դեռ հաստատ տեղեկութիւններ
չունենք:

Այսօր կարդացի «Մշակում», որ Աղստաֆա
կայարանում կարանտին է հաստատվում Արա-
նեան նահանգը Խոյնբայից ազատելու համար:
Բայց հաղիւ թէ այդ միջոցը ցանկալի հետեանը
ունենայ: Արանեան նահանգից Բագու գնացած
բանուորները մեծ խմբերով վերադառնում են հայ-
րենիք Շուշու և Ջանգեղուրի վրայով: Նրեք այդ-
պիսի ճանապարհ չեն ընտրած Նրանեան նահանգի
բնակիչները. այժմ թէ ճանապարհը կարճելու,
թէ բժշկական քննութիւններից ազատ մնալու
համար նրանք թողել են սովորական ճանապարհը

ցել. Ջէվանշիրեան գաւառում հիւանդացաւ
1. եղած հիւանդներից մեռան 8: Նուիսի
քաղաքում հիւանդացաւ 1. Ալիսաւետապոլում
քաղաքից դուրս հիւանդացաւ 1 հոգի և
մեռաւ: Նահանգում կան հիւանդներ՝ Շուշի քա-
ղաքում—34, գաւառում—10, Ջէվանշիրեան գա-
ւառում—9, Ալիսաւետապոլ քաղաքում—3, ընդա-
մենը 56 հոգի:

Կաղստանի նահանգապետը հաղորդում է, որ
յունիսի 26-ին Պետրովսկի հիւանդանոցում մեռաւ
1. Ալիսաւետապոլ, Սամուրեան և Կարգինեան չըջան-
ներում հիւանդացան 11, մեռան 4. Պետրովսկի
հիւանդանոցում հիւանդներ կան 8, չըջաննե-
րում—17 հոգի:

ՍԱՐՍԱՓ ՍԱՐՍԱՓԻ ՎՐԱ

Ամբոխի ֆանտազիան սկսել է հրէշաւոր են-
թադրութիւններ անել: Եւ այժմ ժողովուրդը վա-
խեցում, սոսկում է ոչ թէ Խոյնբայից, այլ—
երևակայեցէք—հիւանդանոցից, բժշկից, ոստիկա-
նութիւնից:

Մինչ մի կողմից քաղաքը, բժշկութիւնը, տե-
ղական իշխանութիւնը և հասարակական բարե-
գործութիւնը ձիգ են թափում օգնել ժողովրդին՝
հիւանդանոցներ բանալով, սանիտարական խմբեր
կազմելով, թէյատներ հիմնելով, դէղինֆէկցիա ա-
նելով—միւս կողմից ինքն ժողովուրդը սարսա-
փելով սարսափում, սոսկալով սոսկում է, երբ
լսում է հիւանդանոցի անունը, երբ տեսնում է
Խոյնբային բարակը, դրօշակակիր կառքը, ոստի-
կանին, կամ սանիտարական բժշկին...

Երազ է այս, թէ հանելուկ...

Հիւանդանոց մտնողը այլ ևս դուրս չի գալ,
այնտեղ թոնաւորում, սպանում են,—ասում է
ամբոխը:

Եւ ահա այդ հրէշաւոր, սարսափելի լուրերի
պատճառով ամենքն էլ թաղցնում են հիւանդնե-
րին, չեն ուզում ոչ բժշկի երես տեսնել, ոչ ոս-
տիկանին իմաց տալ, ոչ ձրի թէյատանը թէյ լը-
մել, ոչ էլ բժշկվել...

Կա աւելի զարհուրելի է, քան թէ ինքը Խոյն-
բային:

Հարկաւոր է դրա առաջն առնել և ժողովրդին
հասկացնել, թէ այդ բոլորը սոսկ է և անհիմն:

Ձը մտնանք, որ այդ նոյն թերահաւատու-
թիւնը և կասկածն է, որ Աստուածանում ոտի
կանգնեցրեց ամբոխին և անսխալ ընդհարումնե-
րի առիթ տուց, ինչպէս երևում է այսօրվայ հե-
ռագրիւններից:

Մեր բոլոր հիւանդանոցները դրօշ չարժեն, մեր
բոլոր սանիտարական ձեռնարկութիւնները օդը
կը ցնեն, եթէ մենք չը համոզենք ժողովրդին,
որ իր կասկածը անհիմն է և սխալ:

Հաւատ ներշնչել ժողովրդին,—ահա այս ախիւր
լինի մեր առաջին և ամենապիտանաւոր գործը:

Խ. Մ.

և գնում են Ջանգեղուր գաւառով. իսկ Ջանգե-
ղուրի և Արանեան նահանգի սահմաններում
բժշկական վերահսկողութիւն չը կայ. չառ կարե-
ւի է, որ այդ սահմանից արդէն անցել են Խոյն-
բայով վարակված հիւանդներ:

Շուշին այժմ է մաքրվում: Սանիտարական
խմբերը չըջաղարում են, ոստիկանութեան հրա-
մանով աղբերն ու կեղտոտութիւնները անաղին
բռնելով քաղաքից դուրս են տարվում: Այսօր-
վանից քաղաքի հրապարակում չեն ծախվում
թուփ, կեռաս և այլ այգալիսի փառք պտուղներ:
—Քաղաքի ջրանցքը առ այժմ փակել անհաղին
կառ, որովհետեւ թուրք ժողովուրդը բառի բուն
նշանակութեամբ ծարաւ կը մնար, եթէ չը լինէր
այդ ջրանցքը: Բայց թէ ինչ դրութեան մէջ է
այդ ջրանցքը, շատ լաւ երևում է հետեւել փառ-
քից: Մնացեալ օրերը քաղաքային բժշկի պ. Բա-
հաթեան մի հայի բակում մի այսպիսի տեսա-
րան դուռ. այդ բակով անցնում է արտաքինոցնե-
րից տարած մեծ կամարը, որը այդ բակում կը-
րում է ջրանցքի խողովակը: Ջրանցքի խողովակը
չինս է հասարակ բարակ երկաթի թերթիկից
և նրա մէջ այնպիսի անհարկ կեղտոտութիւն է
հաւաքված, որը նկարագրել անկարելի է: Այդ-
պիսի խողովակներով անցնող ջուրն է այսպիսի
մի փամանակ խմում քաղաքի ժողովուրդը: Բժիշկ
Բահաթեան կազմել է օրինաւոր արձանագրու-
թիւն և յայտնել է այդ մասին ուր հարկն է:

Ի դէպ. պարզեք եւ համարում այստեղ բացատ-

ՁԸ ՎՀԱՏՎԵՆՔ

Խոյնբայի թիֆլիսումն է:

Կառն իրողութիւնը ծածկելու հարկ չը կայ:
Պէտք է յանդիման դուրս գալ թշնամուն և կռել
նրա հետ գիտութեան դէմը: Իսկ երբ մարդ
զինված է գիտութեամբ, նա ամենակարող է:

Այս դժուարին րօպէում հասարակութիւնը պէտք
է նոյն տոկոսութիւնը, նոյն աշխատելու պատրաս-
տակամութիւնը ցոյց տալ, ինչ որ ցոյց տուցին
քաղաքային վարչութիւնը և բժշկական մարմինը, և
քաղաքը փրկված կը լինի:

Ժողովուրդը թող չը կարծէ ուրեմն, որ Խոյն-
բայի դէմն առնելն անկարելի է: Լաւ առողջապա-
հական հանգամանքներում այս հիւանդութիւնը չէ
զարգանում, նա սիրում է կեղտոտ գետին, որի
մէջ և արմատներ է գցում:

Քաղաքակրթված երկիրներում Խոյնբային, առող-
ջական բարելաւութիւնների չնորոյ, գնալով ան-
դրանում է:

Ահա մի քանի թիւեր.

Պարբերում	1832 թ.	10,000 բնակիչներից մեռան	Խոյնբայից	234 հոգի
> 1849 >	>	>	>	184 >
> 1854 >	>	>	>	78 >
> 1873 >	>	>	>	4 >

Եթէ Բագուում Խոյնբային սարսափելի կոտո-
րած է անում, դրա պատճառը այդ անբաղդ քա-
ղաքի վերին աստիճանի հակաառողջական դու-
թիւնն է: (Բանուորների ողորմելի ապրուստը, ֆի-
զիկական աշխատանքի չափազանցութիւնը, բնա-
կարանների և ընդհանրապէս ամբողջ քաղաքի
տրտութիւնը և հակաառողջական դրութիւնը): Այս
է պատճառը, որ վարակումն ընդգրկել է համա-
րեա խեղճ և սովալուկ ռուս բանուորներին:

Թիֆլիսն ընդհակառակն անհամեմատ աւելի բա-
րեւոյց հանգամանքների մէջ է գտնվում: Սանի-
տարական խմբերի չնորոյ քաղաքն արդէն մաքր-
ված է, ախտահանման (դէզինֆէկցիայի) են-
թադրված, և միւս առողջապահական պայմանները
լաւացրած:

Ժողովուրդն ինքն հասկացել է, թէ ինչպէս
պէտք է պահպանել իրան Խոյնբայից: Օրինակ
նա առաջվայ պէս այլ ևս միջոց չէ ունում,
գետում չէ լողանում, չատերը մինչև անգամ չա-
փաղանցնում են ամեն ինչ: Բացի այդ ոստիկա-
նութեան կողմից խիստ կերպով գործադրվում են
պահպանողական միջոցները: Վարակված երկր-
ներից եկողները մի քանի օր բժշկական հսկողու-
թեան ներքոյ են գտնվում: Իւրաքանչիւր կասկա-
ծելի հիւանդ անմիջապէս ուղարկվում է հիւան-
դանոց և նրա կացարանը արտահանվում է: Ախ-
տահանված է նմանապէս այն կառքը, որով
տարել են հիւանդին: Այսպիսով բժշկական և ոս-
տիկանական վերահսկողութիւնը անպակաս է թէ
եկւորների և թէ հիւանդների վրա:

Այս բոլոր գեղուցութիւնների հետեանքն այն ե-
ղաւ, որ մեր քաղաքում վարակումն չէ տարած-

րել մի բան: Իմ մի նամակում, որը տպվել է
«Մշակ» № 68-ում, խօսելով բժշկապետ Տէր-
Գրիգորեանի ձեռք առած միջոցների մասին, ես
աւելացրել եմ. «տեղական բժիշկներն առհասա-
րակ թիւ զօրք են արել և կարող են անել»: Այդ
խօսքերը բոլորովին չը պիտի հասկանալ այն
մտքով թէ, ուրեմն, տեղական բժիշկները միան-
գամայն անհոգ են գտնվել: Ոչ: Այդ խօսքերը
գրելիս ես նկատի եմ ունեցել գաւառական մի
քաղաք, որը չունի իր ինքնավարութիւնը և նրա
առողջական վիճակի ինստիտուտութիւնը գրտն-
վում է այլ ձեռքերում: Որքան և բարի ցանկու-
թիւն ու եռանդ ունենայ տեղական բժիշկը, բայց
հանգամանքներն այնպէս են, որ նա չառ բան
անել չէ կարող: Փայտնի է, որ Անդրկովկասը
դեռ 1890 թվին էր սպառում Խոյնբային. դեռ
այն ժամանակ Շուշու կազմվել էր սանիտարա-
կան հսկողութիւն. դեռ այն ժամանակ քաղաք-
ային բժիշկը ուղարկութիւն էր հրաւիրել սարսա-
փելի կեղտոտ ջրանցքի վրա և յետոյ էլ չարու-
նակ նոյնը կրկնել է. թուրքերի թաղում եղած
ծարերի սարսափելի դրութիւնը դեռ այն ժամա-
նակից ուղարկութեան առնված է. բայց մի քանի
հանգամանքների պատճառով այդ հարցերը նոյն
դրութեան մէջ մնացել են մինչև այսօր: Հէնց
այդ պատճառով ևս վերոյիշեալ նամակում գրել
էի, որ յուսալի է որ բժշկապետ Տէր-Գրիգորեան,
իրեն նահանգապետի կողմից նշանակած պաշտո-
նեայ, ունենալով աւելի մեծ իրաւունքներ, կարող

վում և բաւականանում է 1—2—3 դոնորով մի-
այն: Այս բոլորը իրաւունք է տալիս կարծելու,
որ Թիֆլիսում Խոյնբային երբեք չի ընդունի այն
ծաւալը, ինչ որ ընդունեց Բագուում, և այսօր
Աստուածանում, և դուցէ նոյն իսկ Սարսափում
նա աւելի դոնոր է տանում, քան թէ մեր քաղա-
քում:

Ձը մտնանք, որ 1890 թվին, երբ Սպանիա-
յում 120,000 հոգի մեռան Խոյնբայից, նրա հա-
րեան Ֆրանսիայում Խոյնբային ոչ մի դոն չը տա-
րաւ, նախադրուական խիստ միջոցների չնորոյ:
Ուրեմն յուսահատվելու պատճառ չը կայ:

Անտարակայս, այսօր Թիֆլիսը Կովկասի ամա-
նապահով քաղաքն է և ոչ մի պատճառ չը կայ
զլխակոր փախչելու, բարձր տեղեր կամ ամա-
րանոցներ գնալու: Ոչ մի բարձրութիւն ապահով
ված չէ Խոյնբայի դէմ. օրինակ ձեռք—Շուշին: Թող
ամեն մարդ մնայ իր տանը, չարունակի իր գոր-
ծերով պարագել, հասկանալով որ Խոյնբային եր-
բեք չէ կարող այնպիսի վնասել մեր քաղաքին, որ-
չափ նրա բնակիչների փախուստը: Մենք համոզ-
ված ենք, որ եթէ Բագուի հարուստները չը փախ-
չէին քաղաքից, այլ օգնէին իրանց բանուորներին,
Խոյնբային այս սարսափելի վնասները չէր հաս-
նի երկրին:

Գծադրութեան մէջ պահպանել սահմանա-
րութիւնը: Փոխանակ փախչելու վտանգից, կը-
ւենք նրա դէմ, յաղթելու համոզմունքով:

Մենք ցոյց կը տանք, թէ ինչպէս:
Բժշկապետ Վ. Արծրունի

ԽՐԱՏՆԵՐ ԽՈՒՆԵՐԱՅԻ ՄԱՍԻՆ

II

Մի ջ ոցն եր, որ պէտք է ձեռնարկել
խօսելու ժամանակ:

Հէնց որ քաղաքում երեսը Խոյնբային առաջին
դէպքը, բոլոր վերս իշխած միջոցները պէտք է
գործադրվին աւելի մեծ խստութեամբ:

Ամեն մարդ պէտք է հոգայ, որ Խոյնբայից ա-
զատվին: Այս պատճառով անհրաժեշտ է առանձին
ուղարկութիւն դարձնել.

ա) Բնակարանի վրա.

բ) Խոհանոցի, սեղանատան և թէյի
պարագաների վրա.

գ) Ուտելիքի և խմելիքի վրա.

դ) Ապրելու եղանակի վրա.

Ա. Բնակարան.

8) Հարկաւոր է, որքան կարելի է, շուտ շուտ
ընակարանի օդը փոխել, եթէ մինչև անգամ նա
ընդարձակ է և մեծ լուսամուտներ ունի:

9) Որովհետեւ չորութիւնը ոգնացնում է Խոյն-
բային, հարկաւոր է զգուշ լինել բակը ջրելուց,
անեակների յատակը լուսանալուց և սնեակում
թաց չորեր պահելուց, որոնք լուսալեկուց յետոյ
պէտք է լաւ չորացնել: Իսկ յատակը մաքրել
միայն չոր չորով:

բ) Խոհանոցի, սեղանատան և թէյի
պարագաների վրա.

է անտանիկ դրութիւններին վերջ դնելու ոյծ
ունենալ:

Նահանգական իշխանութեան կարգադրութեամբ
այժմ բացված են երկու Խոյնբային հիւանդանոց-
ներ, մէկը քաղաքից դուրս, միւսը քաղաքում, մի
անտանիկացած տեղ: Քաղաքի մէջ բացած հիւան-
դանոցում այժմ կան հինգ հատ հիւանդներ, ո-
րոնցից երկուսը բոլորովին լաւացել են. մինչև
այսօր այդտեղ մեռել են երեք հիւանդներ—Հի-
ւանդանոցի հարկանները պահանջում էին հեռաց-
նել հիւանդանոցը ուրիշ տեղ. բայց այդ անկարե-
ւի էր, քանի որ քաղաքի ծայրերում կամ քաղա-
քից դուրս յարմար բնակարան չը կայ. բացի
զրանից հիւանդանոցից արտը տարածվել չէ կա-
րող, այնտեղ այժմ կայ մշտական բժիշկ (պ. Ե.
Աղամալեան, որը Թիֆլիսի բժիշկներից է և գրա-
նվելով այստեղ, յօդաբութիւն յայտնեց Խոյնբայի
ժամանակ ծառայել իր հայրենի քաղաքին): Դա-
տերը պահանջում էին նմանապէս, որ զանգեղու-
րի մշակները, որոնք գալիս էին Բագուից, նրա
չը թողվին քաղաքը, որպէս զի չը վարակին քաղա-
քայիններին: Բայց այդ պահանջն էլ կարելի չեղաւ
կատարել, որովհետեւ չուտով սկսեցին հիւանդա-
նալ քաղաքում Բագուից եկած ունեւոր շուշեցիքն
էլ:

Շուշի.

1.

Հասակները մէջ հանդանակած 65 ր. 30 կօպէկէ (Նոտիարատները ցուցակը կը տպագրուի միւս համարում): Ուրեմն բացի այն 281 ր. 30 կօպէկէ, որն արդէն յանձնեցինք թիֆլիսի պ. քաղաքացիին, այժմ խմբագրութեան մէջ ունենք 67 ր. 30 կօպէկէ:

Մարաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ հաղորդակցութեան ճանապարհների միջնորդութեանը վնաս է Անդրկովկասեան երկաթուղու հետ միացնել գծերով մեր երկրի մի քանի քաղաքները: Երկաթուղի կը կառուցանվի մինչև Ախալցխա, Բագու և կը միացվի Պետրոպոլսի հետ, Լեռնի կայարանը Նոտիարատ հետ, Երևանը թիֆլիսի հետ և Սուխումը Նովո-Սիբիրի կայարանի հետ:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԴԵՊՔԵՐ ԶԻՆԱՍՏԱՆՈՒՄ

Եւրօպական լրագիրները անդադար հեռագրիներ են ստանում Չինաստանից, որ չինական ամբողջ շարունակում է յարձակումներ գործել եւրօպացիների դէմ, յատկապէս եւրօպացի միախոնարների դէմ: Շանգհայից հեռագրում են, որ նոր յարձակումներ գործվեցան միախոնարների դէմ Փու-Կիէն նահանգում, Սեչուէնում և Էնսի-Յէ-Կիսն-Պու-Սի: Անգլիական միախոնարների բնակարանը Չին-ձոյում կողպուղից ամբողջով զիւ. ապրիլի 27-ին, ամբողջ տիրեց քաղաքին և երեք ժամ շարունակ անկարգութիւններ էր գործում այդտեղ: Միախոնարները փախան քաղաքից: Կիէնից-Փու քաղաքում միախոնարները հիւանդանոցը, մայիսի 11-ին կատարելապէս քար ու քանդ եղաւ կատարած ամբողջ ձեռքով: Գոհտոր թիւ միախոնարը ծեծվեց ամբողջով, սակայն կարողացաւ վերջ ի վերջ իր թիւնովը և փախել: Թշնամական ցոյցերը եւրօպացիների դէմ մայիսի վերջում կրկնվեցան Սեչուէն քաղաքում: Հաստատվում են, որ տեղական կառավարութիւնը գաղտնի կերպով աշակցում է ապստամբներին:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Մարդիկ լրագիրներին հեռագրում են յունիսի 20-ին (յուլիսի 2-ին) հետեւեալը. «Քաղաքային նոր հարկեր սահմանելու պատճառով, առեւտրականները ծեծեցին ոստիկաններին և սկսեցին շրջել փողոցներում՝ ստիպելով փակել մարզայինները և ջարդում էին ապակիները: Ժամադարները միջամտեցին գործին. այն ժամանակ հրապարակադատվեցին սկսվեց և մի քանի մարդիկ երկու կողմից էլ վիրավորվեցին: Գլխավոր փողոցներում կատարեալ պատերազմ էր: Անկարգութիւնները շարունակվում են»:

—Լրագիրներին Մարդիկ հեռագրում են, որ կարող վերականգնված է: Պեքէկը թեթև կերպով վիրավորված է քարով: Քաղաքային նոր հարկերի վերջերս դադարեցրին: Շատերին կաշնաւորեցին:

—Մարաքա Մակ-Մահման վերջացրել է իր մէմուարները, որոնք վերաբերում են արեւելեան Աֆրիկայի արշաւանքին, ֆրանս-պրուսական պատերազմին և Պարսիկ պաշարմանը: Մակայն այդ յիշատակարանները կը հրատարակվեն նրա մահից յետոյ:

—Ընտրողական կուռք Անգլիայում շատ խիստ կերպարանք է ընդունում: Մի քանի տեղերում մինչև անգամ զօրեղ ընդհարումներ տեղի ունեցան:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Էմիլ Զօլայի «La Débacle» վեպագրով նոր բռնակ իր երկերու առաջին օրը ծախվեց Պարիզում 66,000 օրինակի քանակութեամբ:

Համեմատելով 1889 թիւը և 1890 թիւը՝ աղ-գաքնակութիւնն իտալիայում աւելացաւ: Մինչդեռ 1889 թիւին իտալիայի աղգաքնակութիւնը 29,969,654 էր, հետեւեալ տարին աճեց մինչև 30,158,408: Սակայն, որիւր կողմից ծնունդներ թիւը նշանաւոր կերպով պակասեց, մի և նորն ժամանակ մահերի թիւն աւելացաւ:

Սեպտեմբերի 23-ին (նոր տոմարով), գումարվել է Լիսաբոնում արեւելագետների ժողով: Այդ ժողովը գտնվում է Պորտուգալիայի թագաւորի հովանաւորութեան տակ: Անդամական վճարը 25 ֆրանկ է: Ժողովին մասնակցելու ցանկացողները պէտք է գիտնայ այս հասցեով. M. Luciano Codeiro, Société de Géographie de Lisbonne.

Դատաւորը դիմելով մեղադրվածին, հարցնում է. —Ինչի համար էք դողանում թաշկինակներ փողոցով անցնողներին... —Ինչ անեմ, պարոն դատաւոր, որ անցնողների մեծ մասի գրգռանքները բացի թաշկինակներից ուրիշ ոչինչ չէ գտնվում...:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍՏԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԵՏԵՐՐՈՒԳ, 26 յունիսի: Ժողովրդական լուսավորութեան միջնորդը արձակուրդ ստացաւ. միջնորդութեան կառավարելը յանձնված է մի-նիստի օգնական իւլիան Վօլկովսկուին: «Новороссийский Телеграф» լրագրի հատով ծախվել ար-գելվեց: Յունիսի 23-ին Սամարայում հիւանդա-ցան խօշրայով 12, մեռաւ 1. Պօկրովսկու մե-ռան 6. Սարատովում յունիսի 24-ին հիւանդա-նոց մահան 18, մեռան 11. մեռաւ են 49. Բաղ-լում յունիսի 23-ին հիւանդանոցում մեռան 17, առողջացան 10. մեռաւ են 166. հիւանդանոցից դուրս մեռան 73. Կովկասի և Անդրկովկասեան երկրի ուրիշ տեղերում հիւանդութեան և մահվան դէպքեր եղան ոչ մեծ թիւով:

ՊԵՏԵՐՐՈՒԳ, 27 յունիսի: Կազմում յունիսի 25-ին մեռաւ երկի ասիական խօշրայից ձիաբար-ը երկաթուղու կողմնակալը. ուրիշ հիւանդացուներ չը կան: Սիմիթսկու հիւանդութիւններ չը կան: Սարատովում յունիսի 25-ին կրկին հիւանդանոց մահան 5 չողի, առողջացան 3, մեռան 11, մեռաւ են 40. խվարկակում յունիսի 24-ին հիւանդացան երկու հոգի, որոնք յոգնեալներով հարաւից էին եկել: Աստրախանում յունիսի 25-ին հիւանդանոց-ներում կային 38, նաւակայարանում 74. Պետ-րովսկու յունիսի 24-ին ընդամենը կային 19 հիւանդներ, Եւլաում գաղտնի հետ միասին 30, երկաւեւայում 45. Բաղլում հիւանդանոցնե-րում մեռան 18. մեռաւ են 179. հիւանդանոցնե-րից դուրս մեռան 94. հիւանդացուները փոքրա-թիւ դէպքեր լինում են Կովկասի և մի քանի ուրիշ տեղերում: Սանիտարական կանոնները ճշգրտեցին գործադրելու համար, Պետերբուրգի քաղաքային կարգադրեց 38 քաղաքամասերից իւրաքանչիւրում հիւանդանոցի մի մի բաժին սանիտարական հոգաբարձուներին, բժշկին և պօ-լիցիական պաշտօնակցին: Բաժինը կը գործէ բժշ-կական վարչութեան առանձին պաշտօնակցի ղեկավարութեամբ: Մայրաքաղաքը մաքրելու և առողջացնելու նպատակով միջոցներ ձեռք առ-նելու համար դրաման երեկ 200,000 ռուբլի կը-տար որոշեց: Միջնորդների մասնագիտութիւնը թիւով տեղեկ Օրդովի գլխավորին գործադրել, որ-պէս փորձ, կարեւորագործութիւնը ցանկութիւն կա-մաւոր պաշտակաւորութիւնը: Ուրիշ դէպքերից ե-րեք նախկին միջնորդութիւնների թիւը ու-թիւնը կախված է պետական կարուածների մի-նիստի հայեցողութիւնից:

ՊԵՏԵՐՐՈՒԳ, 27 յունիսի: Այսօր Սինտ-Ուանում փո-րժութեամբ խօշրայանման հիւանդութեան 5 դէպքեր են եղել և մահվան 1 դէպք. սակայն Պարսիկ ուրիշ արտաբնականներից հիւանդութեան ոչ մի դէպքի մասին ոչինչ չէ հաղորդվում:

ԼԵՅՊՅԻԳ, 27 յունիսի: Չորեքշաբթի, առաւօ-տեան 4 ժամին «cafe bauer»-ում մի գաղտնի պատճառով կու. ծագեց ֆրանսիական ընդհա-նուր հիւպատոս Ժակի և ուրիշ այցելուների մէջ: Բանն այնտեղ հասաւ, որ ստիպված եղան պոլիցիա կանչել: Սկզբում Ժակի դիմադրում էր պոլիցիային էլ, սակայն 5 պոլիցիականներ տարան նրան ոստիկանատուն, որտեղ ճանաչելով նրան, արձակեցին:

ՊԵՏԵՐՐՈՒԳ, 27 յունիսի: Ս. Պետերբուրգի բօրտա. կարուածների խօշրայանման հիւանդանոցները, որոնք ձեռք էին առնված Աստրախանում խօշրայի տարածման առաջն առնելու համար, առաջ բերեցին անմիտ լուրեր քաղաքում՝ բան-ւոր դասակարգի շրջանում, այն մասին, թէ բո-լորովին խօշրայ չը կայ, որ հիւանդացաններին անտեղի կերպով են տեղաւորում հիւանդանոցնե-րում, որ բժիշկները գործում են անկանոն կեր-պով և իբրեւ թէ մինչև անգամ կենդանիներին դնում են դաղաւորների մէջ, նրանց վրա կիր անելով: Այդ տեսակ լուրերով յուզված բանւոր ամբողջ անկարգութիւններ արեց, որոնք արտապայուցան նրանով, որ սկսեցին բռնութիւն գործ դնել բժշկա-կան պաշտօնականների վրա և վերջն էլ հասաւ այն-տեղ, որ սկսեցին խօշրայով հիւանդներին դուրս քաշել հիւանդանոցից, դուրս տանելով նոյն իսկ չը թողված մեռածներին, և կրակ տալով հիւանդանոցը, դրանից յետոյ յուզված ամբողջ բ-րան թիւով տեղեկ քարեր խփել նահանգապետի տան պատուհաններին: Այդ անմիտ արարքներին անկարգի կը աւելարդ տալ ոչ յորդորանքով և ոչ պոլիցիական միջոցներով, այնպէս որ տեղական իշխանութիւնը ստիպվեց դէպք գործ դնել: Միայն առաջին հրապարակագործութիւնից յետոյ ամբողջ հասկացաւ իր անխելացիութիւնը և ցրվեց. իսկ երբ հասաւ Սարատովից երկու գունդ հետեւի գործը, Աստրախանում վերականգնվեց կարգ-պահութիւնը: Յանցարարները պատմականաւորա-

թեան են ենթարկված: Մեծագոյամբ խօ-շրայ լինելու պատճառով, ուստիսպատակ մահ-մեղաւաններին, որոնք ցանկանում են գնալ ա-սիական թիւրքիս, արգելվեց արտասահմանեան անցագիր տալ: շրտաարակված են երկաթու-ղային գծերին վերաբերեալ սանիտարական կա-նոնները, խօշրայ երեւոյւ պատճառով: Յու-նիսի 26-ից Աստրախանում խօշրայով հիւանդ-ներ կային հիւանդանոցներում 115. Բաղաւոյ-լիսի 26-ին 76. մեռան 32. Սամարայի հիւանդա-նոցներում 5. բերկեցան 3. բոլորն էլ եկեղ-ներ են. մեռաւ 1. Պօկրովսկու մեռան 4. մեռաւ են 12. Սարատովի հիւանդանոցներում կային 63. մեռան 16. Յարեցինում հիւանդներ 9. Պետրովս-կու 9. Եւլաում հիւանդացան 12. մեռան 6. յունիսի 25-ին Բաղլի հիւանդանոցը մահան 46. առողջացան 11. մեռան 25. մեռաւ են 180. հի-ւանդանոցից դուրս մեռան 27. Պարսկաշրջոյ ստա-նիցայում հիւանդներ 36. Պրիբլեժնոյ ստանիցա-յում հիւանդացան 8. մեռան 3:

ԱՅԼԵՐ, 28 յունիսի: Երեկ երեկոյան Ֆա-լերեան թատրոնում թիւրքաց ղեկավար և մի քանի յոյն օֆիցիները միմեանց կծու խօսքեր ասեցին անձնական գործով. այդ առիթով դուէլ տեղի ունեցաւ թիւրքաց ղեկավարութեան քա-րտաւար Ալֆրէդ-Բէյի և յոյն օֆիցիեր Պիերակի-մի: Պիերակիս ծանր վիրավորված է: Սպասում են որ նոր միմամարտ կը լինի, որը, սակայն, կարգելի կառավարութեան կողմից:

ԿԱՏԱՆԻՍ, 28 յունիսի: Երեկ սկսվեց Խանայի վիժում: Մի ժամ անցնելուց յետոյ Խանան հան-գաւացաւ: Այսօր մի քանի ստորերկրայ հա-րուածներ տեղի ունեցան:

ԿԱՏԱՆԻՍ, 28-ին յունիսի: Կէս զեչերից սկսած մինչև երեկոյան 11 ժամը 11 անգամ տեղի ունեցան ստորերկրայ հարուածներ. այսօր, ժա-մը 2-ին մի լայն բայուածք կազմվեց, որտեղից լաւան սկսեց հոսել Խանայի հարաւային լանջով, ընդամենը կատանայից 18 կիլոմետր տարածու-թեան վրա, լաւան շատ արագ է հոսում և վե-տանդ է ապաւնում Բինաւոյի գիւղին:

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ՆՈՒՐԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ ԹԻՖԼԻՍԻՄ ԲԱՆԱԼԻ ՁԻՐ ԹԵՅԱՏՆԵՐԻ, ԱՂԱՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Թիֆլիսի Տէր-Սարգսի 25 ռուբլի Ստանիսլավ Չարայիսկուի 25 ր., Իոսիֆ Ֆրաժե 10 ր., Ալեքսանդր Արխանգել 5 ր., Դ-Յա Լոյ 3 ր., Աբրաժ Մուխարինսկի 3 ր., Գաբրիէլ Սարաբեզան 5 ր., Գաբրիէլ Չարայիսկուի 2 ր., Դ. Կովալենկո 3 ր., Դավիդ Ետրաժե 2 ր., Մ. Ռաբինովիչ 1 ր., Մ. Սեյտին 2 ր., Վիրժինե Օբրե 1 ր., Տիկին Լադարեան 2 ր., «Հիւսիսային համարների» տէր 3 ր., Եփրեմ Ծատուրեան 2 ր., Աստուր Գիւրգիշով 5 ր., Եղբ. Գուրապեաններ 15 ր., Յա-րութիկ Գեմալեան 3 ր., Երկին Մարիա (Նախկին Նիկի) 10 ր., Գ. Ֆրիդման 1 ր., Ս. Կաջ 2 ր., Կ. Խարալեան 5 ր., Մ. Եծրով 2 ր., Գ. Կարակոչեան 2 ր., Ա. Յակոբեան 1 ր., Ն. Դեյլե 2 ր., Ալեքսիսեան 2 ր., Յ. Ատուռածատուրեան 5 ր., Ա. Շարիբեզան 2 ր., Ա. Սարաբեզան 3 ր., Կ. Լալայեան 15 ր., Միք. Նաղարեզան 5 ր., Լեյտի 10 ր., Արք. Ալեքեան 1 ր., Ե. Միսախան 1 ր., Համադասկ Արուսեան 5 ր., Դեո Տարաժեճա № 1 3 ր., Գր. Մեհանիով 10 ր., Նիկ. Բաղարեան 5 ր., Յ. Սարիկով 3 ր., «Российское Общество» 10 ր., Դյորան 3 ր., Բր. Ալեքսանդր 20 ր., Գր. Տէր-Նիկողոսեան 15 ր., Նիկ. Սարսիով 5 ր., Վ. Մեղանով 2 ր., Ռ. Ման-դիսեան 3 ր., Ա. Երեմե 5 ր., Ուն Բ. 20 կօպէկէ. —Ընդամենը 281 ր. 20 կօպէկէ:

ԴԵՂԱԳՈՐԾ Ա. Ս. ԱՐԻՍՏԱԿԵԱՆԻ ՊԱՀԵՍՏ ԵՒ

ՎԱՀԱՆՈՒՍՏՈՒՆ ԴԵՂԵՐԻ, մորթին գեղեցկացնող և հոտաւէտ, նոյնպէս և առող-ջապահական նիւթերի և տնտեսական գործիքների, բացված է Կուկիայում, վարձարի արձանի հանդէպ, բժշկապետ Նաւասարեանի առաջին մասն. հիւանդանոցի տակ: (№ 67) 6—100 (Ե. 2.)

ԹԻՖԼԻՍԻ ԲԱՂԱՔԱՅԻՆ ԻԳԱԿԱՆ ՊՐՕՖԵՍԻՈՆԱԼ ԱՐ-ՀԵՍՏԱՆՈՑԻ ԱՐՀԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ ԵՐԵԿՈՑԵԱՆ ԴԱՍԵՐ.

- 1) Հանդերձների և սպորտակիզների ձեւի դասեր Գլոգինսկու մեթոդով և Շեշիթի ֆրանսիական մեթոդով:
 - 2) Կարի դասեր մոզային ժուրնալների:
 - 3) Հարմարեղի և զանազան ձեւադրների դասեր:
 - 4) Դասեր տարրական և ծխական դպրոցների ուսուցչուհիներ պատրաստելու հա-մար:
- Վճարը ամսական 2 ռուբլի երկու անգամ շաբաթը 5-ից մինչև 7 ժամը երեկո-յան:
- Տարրական և ծխական դպրոցների ուսուցչուհիները կարող են այցելել դասերը ձրի: (№ 23) 34—40

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Հ. Յ. ՕՐԲԵԼԻ

Սոլոյակիայա փողոց, սեփական տանը №15—16

ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՀԻՄԱՆԴՆԵՐԻՆ

Առաւօտեան 12 ժամից մինչև 2 ժ. և երեկոյան 5 ժամից մինչև 7 ժ. Կիրակի և տօն օրերին առաւօտեան 8 ժամից մինչև 2 ժամ կէսօրից յետոյ: (№ 145) 66—150

Խ Ր Ի Մ Ե Ա Ն

Կ Ե Ն Ս Ա Ջ Ե Կ Ա Ն Ս Ե Ս Ը Թ Ի Ը Ն (պատկերով)

Խ. ՄԱԼՈՒՄԵՆՈՒ

Գնել կարելի է զրաւաճառանոցներում: Գինն է 40 Կ: Օտար քաղաքներից զինել հեղինակին, «Մշակ» խմբագրատուն: (№ 45) 4—5